նեբի համար, մեր կեանքը այլևս չի կարող վերջանալ, նա կըլինի Աստուծոյ մի մանիկը, որ միշտ եղել է, է և կըլինի։

Եւ մենք բարիք պէտք է գործենք ոչ թէ դիտաւորի երկիւղից ստիպուած կամ դրախտին արժանի լինելու յուսով, այլ նրա համար, որ հոգևոր կեանքով ապրելով, մարդ չի էլ կարող ուրիշ բան ցանկանալ, բացի բարուց։ Իսկ հաւատալով իւր հոգևոր լինելուն, մարդ չի կարող վախենալ մահից, ոչնչանալուց։

Իսկ այն բանի մասին, թէ ինչպիսի կեանք պիտի ունենայ յետոյ, հոգևոր կեանքով ապրող մարդը չի հոգում՝ հաւատալով Հօր-Աստուծուն, որից նա առաջացել է և դէպի որը գնում է և որի մէջ ապրել է, ապրում է և պիտի ապրի։

Թարգմ. Մամբրէ վարդապետ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Դեկտեմբերի 22-ին Սինոդի շրջաբերականի համաձայն Ագուլիս ուղևորուեց Սինոդի անդամ տէր Մատթէոս վարդապետը Երևանի թեմի այդ կողմը բևեռիայի ենթարկելու և մի ամուսնալուծական խնդրի մասին քննութիւն կատարելու։

Նոյն նպատակաւ դեկտեմբերի 25-ին Բաքու ուղևորուեց Սինոդի անդամ տ. Բաբգէն վարդապետը Շամախու թեմի բևեռիայի համար։

Բաքու քաղաքի գործակալ և եկեղեցեաց բարեկարգիչ նշանակուեց տ. Զաւէն վարդապետը։

[illegible]

Ամուսնացողներից բժշկական վկայական պահանջելու որոշումը որ տեղի ունեցաւ նոյեմբերին ս. Սինոդի կողմից, մեր ստացած տեղեկութիւնների համաձայն գոհունակութիւն պատճառեց հայ ժողովրդին և մի քանի տեղերից ստացուեցին գոհունակութեան հեռագիրներ։

Նոյնպիսի տպաւորութիւն է թողել և թեմական առեաններն ու թեմերը բևեղիայի ենթարկելու որոշումը։ Հաւատացնում են, որ շատ տեղ անշարժ մնում են բազմազան գեղծումների վերաբերեալ գործերը, թէպետ նրանք վերաքննուած և հաստատուած են մի քանի քննիչների ձեռքով։ Այդպիսի անփութութեան մէջ մեղադրում են թեմական Առեաններին կազմը, որոնք այդ գործերը թողել են անշարժ այլ և այլ դիտաւորութիւններով գուցէ այդպիսով խրախուսելով յանցաւորութեան տրամադրութիւնը։ Նամակագիրները յոյս են տածում, որ Սինոդի նոր որոշմամբ վերջապէս յետ կը քաշուի տասնեակ տարիների ընթացքում այդ գործերի վրայ քաշուած «մինդարը», և յանցաւորները կ՝արժանանան օրինաւոր պատժի ի խրատ և ի զգուշութիւն այլոց։

Կատարեալ յաջողութիւն մաղթելով առաջին քննիչներին, յոյս ունինք, որ կը կարողանան վերջ դնել խնամութեան և այլ կապերի շնորհիւ տասնեակ տարիների ընթացքում յանցաւորներին ծածկելու կորստաբեր սովորութիւններին։